Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«02» դեկտեմբերի 2019թ. N Վ-46/1

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը, վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատակից Ն. Մկրտչյանի կողմից 11.11.2019 թվականին հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 154.1–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված վարչական իրավախախտում, մասնավորապես՝ «Եռաբլուր» կոչվող բլուրներին կից հողամաս հասցեում, առևտրի կենտրոնի կառուցման համար 02.10.2017 թվականին տրված 01/18-Մ-6550-913 շինարարության թույլտվությամբ սահմանվել է 2 տարի ժամկետ, սակայն կառուցապատող Շողերինա Ստեփանի Մկրտչյանի կողմից շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի ակտը ձևակերպված չէ, որի վերաբերյալ 18.11.2019 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 032899 արձանագրությունը (այսուհետ՝ արձանագրություն):

Որպես իրավախախտման փաստը հաստատող ապացույց լուսանկարվել է իրավախախտման վայրը:

Հայտնաբերված իրավախախտման փաստով Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ:

Կառուցապատող Շողերինա Ստեփանի Մկրտչյանը ծանուցված լինելով 02.12.2019 թվականին կայանալիք գործի քննության տեղի և ժամանակի մասին չներկայացավ, ուստի Օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործը քննվեց վերջինիս բացակայությամբ:

Գործի քննության ընթացքում ուսումնասիրվեցին արձանագրությունը, 02.10.2017 թվականին տրված 01/18-Մ-6550-913 շինարարության թույլտվությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի11.11.2019 թվականի հ. 19/23757 և 20.11.2019 թվականի հ. 19/24567 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության տարածքային առաջին բաժնի աշխատակցի կողմից 18.11.2019 թվակաին կազմված արձանագրությունը, «Երևաննախագիծ» ՓԲԸ–ի կողմից տրամադրված՝ կառուցվող օբյեկտի նախահաշվային արժեքի մասին տեղեկատվությունը և իրավախախտման լուսանկարը:

Գործի փաստական հանգամանքների և դրանում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հիմնավորվեց, որ «Եռաբլուր» կոչվող բլուրներին կից հողամաս հասցեում, առևտրի կենտրոնի կառուցման համար 02.10.2017 թվականին տրված 01/18-Մ-6550-913 շինարարության թույլտվությամբ սահմանվել է 2 տարի ժամկետ, սակայն այդ ժամկետում կառուցապատող Շողերինա Ստեփանի Մկրտչյանի կողմից շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի ակտը ձևակերպված չէ, որով թույլ է տրվել Օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված վարչական իրավախախտում:

2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:

Օրենսգրքի 154.1–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ շինարարության նախահաշվային արժեքի մեկ տոկոսի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով, 154.1–րդ հոդվածի 1–ին մասով, 219.1-րդ, 281-րդ և 282-րդ հոդվածներով, Երևանի քաղաքապետի 23.08.2013 թվականի թիվ 4180-Ա որոշմամբ (փոփոխ. 01.08.2017 թվականի թիվ 2645-Ա)՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Կառուցապատող Շողերինա Ստեփանի Մկրտչյանին Օրենսգրքի 154.1–րդ հոդվածի 1-ին մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 9.465.000 (ինն միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով:

2. Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ կենտրոնական գանձապետարանի N 900015211239 հաշվին:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական և դատական կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ *ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*